Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-Ե32 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը**:

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 6 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ, որոնց մասնակցել են 42 շահառու:
    - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
    - Կինեզոլոգիա,
    - Երգ,
    - Խոհարարական,
    - Առողջապահական,
    - Հմուտ ձեռքեր,
    - Գրական,
    - Յոգա
    - Մարմնամարզություն-պար
    - Կար

  Կենտրոններում կազմակերպվել է թվով 15 միջոցառում (Աջափնյակում 4, Շենգավիթում 11): Շահառուները մասնակցել են տարբեր համերգասրահներում կազմակերպված 36 համերգի և 4 ներկայացման:
  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումներին մասնակցել են 42 շահառու:
  Իրականացված միջոցառումներն են.

- Հանդիպում քահանայի հետ Աջափնյակի և Շենգավիթի ցերեկային կենտրոններում,
- Էքսկուրսիա՝ Սբ.Հարություն եկեղեցի. Սարդարապատի հուշահամալիր. Էջմիածին,
- Միջոցառում՝ Ռնության թանգարանում «Գոհարներ» երգչախմբի ղեկավար՝ Գոհար Հարությունյանի նկարների ցուցահանդես,
- Ծննդյան օրերի նշում Աջափնյակ եվ Շենգավիթ ցերեկային կենտրոններում,
- Սուրբ Հարության տոնի նշում Աջափնյակ եվ Շենգավիթ ցերեկային կենտրոններում,
- Միջոցառում՝ նվիրված Շնորհալի շահառուներին,
- Միջոցառում՝ նվիրված Հայրենիքին,
- Էքսկուրսիա՝ Եղվարդ. Ջալամների պարտեզ. Սաղմոսավանք,
- Էքսկուրսիա՝ Մուղնու Սբ.Գեվորգ. Սաղմոսավանք. Տեղերի վանք
- Էքսկուրսիա՝ Սարդարապատի հուշահալիր. Գյումրի, Դիլիջան, Հաղարծին.
- Էքսկուրսիա՝ Գյումրի. Յոթ Վերք, Սբ.Խաչ, Ամենափրկիչ եկեղեցի. Վահրամաբերդ. Մարմաշեն. Սբ.Աստվածածին եկեղեցի. Սեվ բերդ. Վառեմ.մարեմ,
- Էքսկուրսիա՝ Ջրաշուշանների լիճ. Ստեփանավան՝ Դենդրոպարկ. Սբ.Կամակատար վանք,

**Մասնակցություն համերգներին և ներկայացումներին.**

- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն.
  Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը. Չեխական երաժշտության երեկո՝ (Դվորժակ, Յանաչեկ) Չեխիայի դեսպանատան հետ համագործակցությամբ. դիրիժոր՝ Ալիմ Շախ: Երգեհոնային երաժշտության համերգ. Աննա Բակոնց. Վիվալդի. Բախ: Ֆրանկոֆոնիայի շրջանակներում համերգ՝ նվիրված մայրության եվ գեղեցկության տոնին. կատարողներ՝ Կոմիտասի անվան ազգային քառյակ. դաշնակահար՝ Ժան Պոլ Գասպարյան: Տեսիլներ քեզ համար. գրական երաժշտական երեկո նվիրված կանանց միամսյակին: Հայաստանի Պետական կամերային նվագախումբ, Երեվանի պետական կամերային երգչախմբի համերգը: Հայաստանի ֆրանկաֆոնիայի օրերի շրջանակում. (Սենսանիսի եվ Ռավելի ստեղծագործությունները): Հայաստանի պետական կամերային երգչախումբ. նվիրված եղեռնի զոհերի հիշատակին: Հնագույն երաժշտության՝ «Տաղարան» համույթի համերգը: Երեվակայական ֆոլկլոր համերգը:
- Ա.Խաչատրյան համերգասրահ. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Լորենցո Դի Բելլա դաշնամուր. Էկարտ Պրոյ դիրիժոր. Լյուդվիգ Վան Բեթհովեն, Ֆելիքս Մենդելսոն: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ. Անրի Վեռնոյ, ռեժիսոր կինոների երաժշտությունների համերգը: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը Ալ.Սպենդիարյանի. Բրամսի ստեղծագործությունները: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հերոսության եվ փառքի 80 տարի. Դմիտրի Շոստակովիչ՝ սիմֆոնիա թիվ 7, «Լենինգրադյան», դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ղազարոս Սարյան 105-ամյակին նվիրված համերգ: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Բեթհովեն դաշնամուրի կոնցերտ N4 սիմֆոնիա: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հայաստանի 1-ին հանրապետության տոնին նվիրված համերգ, հանրահայտ ջութակահարուհի Դիանա Ադամյանի մասնակցությամբ: Ղազախստանի Հանրապետության մշակույթի օրերի շրջանակում Ղազախստանի արվեստի վարպետների գալա համերգը: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգ. Դմիտրի Շոստակովիչի դաշնամուրի կոնցերտ N2, սիմֆոնիա N15: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ. Սերգեյ Սմբատյան, Նիկ Ֆեն, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բացման արարողություն: Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթ, պարգեվատրման արարողության գալահամերգ: ՀՀ հանրային ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի համերգը. Շարլ Ազնավուրի երգերը: Լյուդվիգ վան Բեթհովեն, դաշնամուրի կոնցերտ թիվ 5, մենակատար՝ Ֆրանսուա-Ֆրեդերիկ Գի - դաշնամուր, Յոհաննես Բրամս սիմֆոնիա թիվ 1. դիրիժոր՝ Մարկ Ալբրեխտ: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը:

- Ա.Բաբաջանյան համերգասրահ. Ռաֆայել Տերլիցի – դաշնամուր, Մարկո Տերլիցի – ջութակ:
- Ազգային ժողովրդական երաժշտության եվ պարի ազգային կենտրոն. Ազգային նվագարանների պետական անսամբլի համերգը:
- Ղազախստանի հանրապետության մշակույթի օրերը Հայաստանի Հանրապետությունում. կինոֆիլմի դիտում «Մոսկվա» կինոթատրոնում:
- Ժողովրդական երգի և պարի ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում ազգային նվագարանների պետական անսամբլի համերգ,
- Երևանի միջազգային բալետային փառատոն՝ կազմակերպված Թումանյանի անվան այգում Երևանի քաղաքապետարանի կողմից: Մոսկվայի Մեծ թատրոնի բալետի ներկայացում՝ Ադանի Ժիզել բալետը:
- Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն. ներկայացում. «Անվերջ վերադարձ», Ռեոնարդ Ալեյդի «Վերջին ճամփածուն», «Համլետ», «Ա՜խ, Աննա-Աննա»:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 36 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 37 ) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականության ու ուշադրության կենտրոնացմանը:
  Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը եվ ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:
- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Բաղնիքի ծառայության տրամադրման** շրջանակներում թվով 1 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:
- **Վարսավիրական ծառայության տրամադրում** Աջափնյակ կենտրոնում թվով 3 շահառու օգտվել է վարսավիրական ծառայությունից :
- **AMAA** Ամերիկայի հայ Ավետարանչական ընկերության հետ համագործակցության արդյունքում՝ Աջափնյակ կենտրոնի շահառուների առողջության պահպանման նպատակով կազմակերպվել է հավելյալ հետազոտություններ, տրամադրվել է համապատասխան դեղորայք:
- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից 10 շահառուի տրամադրվել է վերարկու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
- Էքսկուրսիա՝ Սբ.Հարություն եկեղեցի. Սարդարապատի հուշահամալիր. Էջմիածին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/19KifoySmn/ ),
- Բնության թանգարանում. «Գոհարներ» երգչախմբի ղեկավար՝ Գոհար Հարությունյանի նկարների ցուցահանդեսը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1AWPgin7Aw/ ),
- Ծննդյան օրերի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ )
- Նվիրված՝ Սբ.Հարության տոնին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1CDB2WdSVy/ ),
- Նվիրված՝ Ծնողների շահառուներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1BkiF2vkZi/) ,

- Միջոցառում՝ նվիրված Հայրենիքին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/15tW1wdrex/ ) ,
- Էքսկուրսիա՝ Եղվարդ. Զորավարների պարտեզ. Սաղմոսավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1CuqKArxs4/ ) ,
- Էքսկուրսիա՝ Մուղնու Սբ.Գևորգ. Սաղմոսավանք. Տեղերի վանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1AkXwEz799/ ),
- Էքսկուրսիա՝ Գյումրի. Յոթ Վերք. Սբ.Խաչ. Ամենափրկիչ եկեղեցի. Վարդանաբերդ. Մարմաշեն. Սբ.Աստվածածին եկեղեցի. Սեվ բերդ. Վառեմ.մարեմ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ ),
- Էքսկուրսիա՝ Քրաշուշանների լիճ. Ստեփանավան՝ Դենդրոպարկ. Սբ.Կամակատար վանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ ),
- Էքսկուրսիա՝ Գյումրի, Յոթ վերք. Սբ.Նշան. Ամենափրկիչ եկեղեցիները. Հ.Շիրազի. Մ.Մկրտչյանի տուն-թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100081543423963/videos/992397472756372/),
- Էքսկուրսիա՝ Դիլիջան, Հաղարծին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid031VYWm5YAu8D7G2HZ7cGPiP9dBZK5V1DWozQknHBeVdTitEnxcNb6KqPz2Nvoc2vbl&id=100081543423963 ),
- Նվիրված՝ Սուրբ Հայրության տոնին ( տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02ePJ7UXUtzutzFCJsZgqmxUmgmGhBS12gYecquS7PAfPSAhrMnBYheGnf9QapwyBSl&id=100081543423963),
- Էքսկուրսիա՝ Սարդարապատի հուշահամալիր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02pDUvXtbKrjAfSa2gG1si3PhpsMHjiUNdrw69fvsSYjRX1NBhxshSJ4Xx4uESRuVl&id=100081543423963),
- Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/v/15r1za4q8M/),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1Gvvnh7B1G/ ),
- Հանդիպում քահանայի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1F8tfK6Ur1/ ),
- Խոհարարական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/195p4EuYy6/ ),
- Հմուտ ձեռքեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/16kgqkcaGr/ ),
- Գրական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/18bPRjBQ86/ ),
- Հոգեբան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0Jne8m2aSqVut8UpU58XALGqkuVib6D6aJxPRYFyJoXaHQHjgIAKgktJRFf4q6VIvl&id=100081543423963 ),
- Ձեռքի աշխատանք ( տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0aZbrA3BsMk8ABiIXPMLPB1jPfR3u3PGn1YbF7wAaEUjV7AB4gB2Lj442em2t6Yhul&id=100081543423963):
- Խոհարարական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/195p4EuYy6/ )
- Հմուտ ձեռքեր(տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/16kgqkcaGr/ ),
- Գրական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/18bPRjBQ86/ )

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Աշափնյակ, Շենգավիթ ցերեկային կենտրոնների աշխատակիցները մասնակցել են. «Կազմակերպության էթիկական նորմեր և վարքականոններ, Անվտանգության ապահովման քաղաքականություն և ազդարարման ընթացակարգ» թեմայով վերապատրաստման դասընթացին:

Ձևաչափ

ԵՐԵՎԱՆՅԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 39 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 41 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 4. | Աշխատանքային/արտաթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 37 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն. կերպարվեստ | 16 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 25 |
| 5.3 | Ձեռքի աշխատանք | 27 |
| 5.4 | Երգ | 20 |
| 5.5 | Խոհարարական | 12 |
| 5.6 | Առողջապահական | 28 |
| 5.7 | Գրական | 17 |
| 5.8 | Յոգա | 6 |
| 5.9 | Մարմնամարզություն/պար | 15 |
| 5.10 | Կար | 2 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 37 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)՝ Բաղնիքի ծառայություն | 1 |
| 7.1 | Վարսավիրական ծառայություն | 3 |
| 7.2 | Բուժքույրական ծառայություն | 44 |
| 7.3 | Հագուստի բաշխում | 10 |

Կազմակերպության ղեկավար ______Երվանդ Միքայելյան______ «01»07.2025թ